ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2014թ. N ___-Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, 73-րդ հոդվածի 1-ին մասի 24–րդ կետով և 75-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 28^2-րդ հոդվածի 2-րդ կետի գ) ենթակետով, 33-րդ հոդվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին համաձայնություն տալու մասին» N 850-Ա, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջետային հիմնարկներում և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում 1974 թվականից հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների փոխհատուցման համար Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 792-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 855-Ն որոշումները՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի մասին» N 97-Ն որոշմամբ հաստատված.

1) եկամուտների գումարն ավելացնել 3,681,657.5 հազար դրամով,
2) ծախսերի գումարն ավելացնել 3,910,932.5 հազար դրամով,

3) դեֆիցիտի (պակասուրդի) գումարն ավելացնել 229,275.0 հազար դրամով։

2. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի մասին» N 97-Ն որոշմամբ հաստատված NN 1-7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-7 հավելվածների։

3. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի մասին» N 97-Ն որոշման 2-րդ կետի «5,948,702.3 հազար դրամ» բառերը փոխարինել «5,926,765.4 հազար դրամ» բառերով, 2-րդ կետի 1-ին ենթակետի «4,905,768.3 հազար դրամ» բառերը փոխարինել «4,972,012.1 հազար դրամ» բառերով, 2-րդ ենթակետի «1,020,997.1 հազար դրամ» բառերը փոխարինել «954,753.3 հազար դրամ» բառերով։

4. Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել մինչև 56,071.0 հազար դրամ, որից՝

1) ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամ կամ այդպիսի հաշմանդամներ փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնություն տրամադրելու համար 9 ամսում հատկացնել մինչև 1,000.0 հազար դրամ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Պարտադիր վճարներ» հոդվածով,

2) Երևանի ենթակայության կազմակերպություններին աջակցելու նպատակով նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների վճարմամբ պայմանավորված՝ առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման համար հատկացնել մինչև 55,071.0 հազար դրամ, որից մինչև 27,535.5 հազար դրամը 2014 թվականի 9 ամսում, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին» հոդվածով։

5. Թույլատրել Երևանի քաղաքապետին սահմանել սույն որոշման 4-րդ կետի 2-րդ ենթակետով հատկացված գումարների բաշխումը՝ ըստ ստացող կազմակերպությունների։

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 97-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 855-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին հատկացվել է 4.0 մլրդ դրամ Երևան քաղաքում ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգման աշխատանքներին օժանդակելու նպատակով: Վերջին տարիներին նախաձեռնված՝ Երևան քաղաքում պողոտաների և փողոցների ասֆալտբետոնյա ծածկի լայնամասշտաբ վերանորոգման աշխատանքները շարունակական բնույթ են կրում: Միաժամանակ, Երևան քաղաքում ասֆալտապատման աշխատանքները բոլոր վարչական շրջաններում համաչափ իրականացնելու սկզբունքներն ապահովելու նպատակով, կենտրոնական փողոցներից անցում է կատարվել ծայրամասային վարչական շրջաններ: Երևան քաղաքում, ինչպես ՀՀ և Երևան քաղաքի բյուջեներից, այնպես էլ միջազգային վարկային և դրամաշնորհային ծրագրերով լայնածավալ աշխատանքներ են իրականացվում ասֆալտբետոնյա ծածկի վերականգնման և հիմնանորոգման, ինչպես նաև նոր ճանապարհների կառուցման ուղղությամբ, ինչը քաղաքային իշխանությունների կարևորագույն խնդիրներից է: Որոշման ընդունման արդյունքում ակնկալվում է Երևան քաղաքում ունենալ շուրջ 508,600 քառ մետր՝ նոր, բարձրորակ ասֆալտբետոնյա շերտ երթևեկելի հատվածներում, շուրջ 105,535 քառ. մետր՝ ասֆալտբետոնյա շերտ, մայթերի հատվածներում, ինչպես նաև շուրջ 55,040 գծմ՝ նոր եզրաքարերի տեղադրում: Որոշման ընդունումը կնպաստի Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում ունենալ բարձրորակ ասֆալտապատված տարածքներ: Ուստի, նախագծով առաջարկվում է Երևան

քաղաքի 2014 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 4.0 մլրդ դրամով։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մասնավորեցումից ստացված միջոցների տնօրինման ծրագրին համաձայնություն տալու մասին» N 850-Ա որոշմամբ Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող, պետական սեփականության մասնավորեցումից՝ Երևանի քաղաքապետարանի անվամբ բացված հատուկ հաշվում կուտակված միջոցների մնացորդից 229,275.0 հազար դրամն ուղղվել է Երևան քաղաքի Վիլնյուսի փողոցի շարունակության հատվածի (Նոր Նորքի 8-րդ զանգվածը 9-րդ զանգվածին միացնող հատված) կառուցման աշխատանքների իրականացմանը։ Քանի որ վերոնշյալ հաշվի միջոցները հանդիսանում են բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր, ուստի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը) և դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորումը կավելանան 229,275.0 հազար դրամով։ Երևան քաղաքում վերջին տարիներին իրականացվում են ճանապարհաշինարարական խոշորածավալ ծրագրեր։ Նշված ծրագրերի շրջանակներում էլ նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Վիլնյուսի փողոցի շարունակության կառուցման աշխատանքները։ Վիլնյուսի փողոցի՝ Նոր Նորքի 8-րդ զանգվածից 9-րդ զանգվածին միացնող հատվածը անցնելու համար ներկայումս ճանապարհը շրջանցվում է, քանի որ տվյալ հատվածում առկա են ժայռաբեկորներ և ընդհանրապես ճանապարհային հատված առկա չէ, ինչպես նաև երթևեկելի չէ։ Որոշման ընդունման արդյունքում հնարավորություն կընձեռնվի քաղաքացիներին անարգել երթևեկել Նոր Նորքի 8-րդ զանգվածից դեպի 9-րդ զանգված, միաժամանակ ունենալով բարձրակարգ ասֆալտապատ ճանապարհային հատված։ Վիլնյուսի փողոցի շարունակության հատվածի (Նոր Նորքի 8-րդ զանգվածը 9-րդ զանգվածին միացնող հատված) կառուցման ծրագրի շրջանակներում նախատեսվող ճանապարհի ընդհանուր երկարությունը 537 մետր է, լայնությունը 8-11 մետր (ներքին և վերին հատվածների լայնությունը տարբեր է), աջ և ձախ կողմերում մայթերի լայնությունը 1 մետր։ Տվյալ հատվածում նաև նախատեսվում է անցկացնել արտաքին լուսավորության միակողմանի ցանց՝ թվով շուրջ 20 հենասյուների միջոցով։ Ընդհանուր առմամբ, այդ հատվածում նախատեսվում է իրականացնել շուրջ 4796 քառ. մետր ասֆալտապատման աշխատանքներ՝ խոշորահատիկ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրումով (ներքին շերտ)՝ h=6սմ, մանրահատիկ ասֆալտբետոնյա ծածկի տեղադրումով (վերին շերտ)՝ h=4սմ։ Որոշման

ընդունումը կնպաստի Երևան քաղաքում ճանապարհաշինարարական շարունակական բնույթ կրող ծրագրերի իրականացմանը։

3. Վերգետնյա անցումների կառուցման ծրագիրը նախատեսվել է Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. N 404-Ա որոշմամբ հավանության արժանացած ծրագրով և հաշվարկվել է թվով 7 վերգետնյա անցումների համար 572,000.0 հազ. դրամ, որից շինարարության արժեքը՝ 560,000.0 հազ. դրամ, իսկ մնացած 12,000.0 հազ. դրամը՝ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը։ Անցումների կառուցման վճարման դիմաց նախատեսվել են 247,275.0 հազ. դրամ՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության տուրքի և 312,725.0 հազ. դրամ՝ գովազդային տարածքի վարձավճարի գծով եկամուտներ։ Սակայն գնման գործընթացի արդյունքում ծրագիրը կայացել է միայն թվով 5 վերգետնյա անցումների մասով, ինչի արդյունքում առաջարկվում է Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի ծախսային և եկամտային մասերը նվազեցնել 373,413.5 հազ. դրամով (որից եկամտային մասում՝ գովազդի տուրքը նվազեցվում է 88,335.0 հազ. դրամով, իսկ վարձավճարները՝ 285,078.5 հազ. դրամով)։ Քանի որ վերգետնյա անցումների կառուցումը բյուջեով նախատեսված է որպես ֆոնդային ծախս, բայց եկամտային մասում հանդիսանում է վարչական եկամուտ, ուստի, բյուջեն հավասարակշռելու համար առաջարկվում է 373,413.5 հազ. դրամով նվազեցնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումները։

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջետային հիմնարկներում և համայնքի բյուջեից ֆինանսավորվող համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում 1974 թվականից հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների փոխհատուցման համար Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 792-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2014 թվականի պահուստային ֆոնդից որպես սուբվենցիա հատկացվել է 55,071.0 հազար դրամ Երևանի ենթակայության կազմակերպություններին աջակցելու նպատակով 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված՝ նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների նպատակային սոցիալական վճարների գումարների վճարմամբ պայմանավորված՝ առաջացող լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման համար։ Արդյունքում, նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերն ավելացնել 55,071.0 հազար դրամով (ընդ որում՝ ծախսային մասը ավելանում է պահուստային ֆոնդը ավելացնելու հաշվին)։

Նախագծով առաջարկվում է քաղաքապետի որոշման հիման վրա պահուստային ֆոնդից հատկացված գումարները բաշխել ըստ ստացող կազմակերպությունների։

5. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր Տրանշ 1-ի իրականացման ընթացքն ապահովելու համար EMME 3 տրանսպորտային համակարգչային մոդելի ձեռք բերման նպատակով 2011 թվականին ԱԶԲ-ի համաձայնությամբ «Երևանտրանս» ՓԲԸ-ի կողմից իրականացված ռետրոակտիվ ֆինանսավորման շրջանակներում փոխանցված 2,800.0 հազար ՀՀ դրամի չափով գումարը փոխհատուցելու, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների շրջանակներում մատուցված ծառայությունների շրջանակներում առաջացած հարկային պարտավորությունների կատարումը ժամանակին և պատշաճ կերպով ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներով նախատեսված 66,243.8 հազար ՀՀ դրամի շրջանակներում ավելացնել 4861 «Այլ ծախսեր» հոդվածը՝ նույն չափով նվազեցնելով 4639 «Այլ ընթացիկ դրամաշնորհներ» հոդվածը։ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված 2014 թվականի հունիսի 19-ի N 4/4.2/9134-14 գրությամբ հաստատվել է միջհոդվածային փոփոխություն կատարելու առաջարկը։

6. Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N 190-Ն որոշման 1-ին կետի համաձայն ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր կամ այլ օրինական տիրապետող հանդիսացող և այն ղեկավարող տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամ կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամ) փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող անձանց համար սահմանվել է ավտոկայանատեղի տուրքի վճարման արտոնություն՝ նշված տուրքը վճարելով Երևանի քաղաքային համայնքի բյուջեից: Հաշվի առնելով վերոգրյալը նախագծով առաջարկվում է Երևան քաղաքի 2014 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 1.0 մլն դրամ։ Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի հունիսի 24-ի N 190-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետին են դիմել տեղաշարժվելու դժվարություն ունեցող հաշմանդամ կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող երեխա (այսուհետ՝ հաշմանդամ) փոխադրող տրանսպորտային միջոց ղեկավարող թվով 38 անձինք։ Ուստի, հաշվի առնելով դիմումների քանակը, հաշվարկը կատարվել է 100 անձանց հաշվով։

Ելնելով վերոգրյալից, առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 97-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 97-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի N 97-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման արդյունքում Երևանի քաղաքի 2014 թվականի բյուջեի եկամուտներն ավելացնել 3,681,657.5 հազար դրամով, ծախսերը՝ 3,910,932.5 հազար դրամով և դեֆիցիտը (պակասուրդը)՝ 229,275.0 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**		**3 681 657,5**	**3 681 657,5**	**3 626 586,5**
	այդ թվում՝				
1100	**1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ**	**7100**	**(88 335,0)**	**(88 335,0)**	**-**
	այդ թվում՝				
1130	**1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ**	**7145**	**(88 335,0)**	**(88 335,0)**	**-**
	այդ թվում՝				
1131	Տեղական տուրքեր	71452	**(88 335,0)**	**(88 335,0)**	
	այդ թվում՝				
1142	բ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար		(88 335,0)	(88 335,0)	-
1200	**2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	**7300**	**4 055 071,0**	**4 055 071,0**	**-**
	այդ թվում՝				
1250	**2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից**	**7331**	**4 055 071,0**	**4 055 071,0**	**-**
	որից՝				
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ		4 000 000,0	4 000 000,0	-
	այդ թվում՝				
1256	բբ) այլ դոտացիաներ		4 000 000,0	4 000 000,0	-
1257	գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)		55 071,0	55 071,0	-
1300	**3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ**	**7400**	**(285 078,5)**	**(285 078,5)**	**3 626 586,5**
	այդ թվում՝				
1330	**3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ**	**7415**	**(285 078,5)**	**(285 078,5)**	**-**
	այդ թվում՝				
1334	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր		(285 078,5)	(285 078,5)	-
1390	**3.9 Այլ եկամուտներ**	**7451**	**-**	**-**	**3 626 586,5**
	այդ թվում՝		-		
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	3 626 586,5

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**3 910 932,5**	**3 681 657,5**	**3 855 861,5**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
				այդ թվում՝			
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***	**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	3 855 861,5	-	3 855 861,5
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**55 071,0**	**3 681 657,5**	**-**
				այդ թվում՝			
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***	**55 071,0**	**3 681 657,5**	**-**
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	55 071,0	3 681 657,5	-

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տող NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**		**3 910 932,5**	**3 681 657,5**	**3 855 861,5**
	այդ թվում՝				
4050	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝**	x	**55 071,0**	**3 681 657,5**	**-**
	այդ թվում՝				
4700	***1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ***	x	**55 071,0**	**3 681 657,5**	**-**
	այդ թվում՝				
4770	***ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ***	x	**55 071,0**	**3 681 657,5**	**-**
	որից՝				
4771	**-Պահուստային միջոցներ**	4891	55 071,0	55 071,0	-
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	-	3 626 586,5	-
5000	**Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ**	x	**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
	այդ թվում՝				
5100	**1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**	x	**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
	այդ թվում՝				
5110	***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ***	x	3 855 861,5	-	3 855 861,5
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(144 138,5)	-	(144 138,5)
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	4 000 000,0	-	4 000 000,0

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ N 4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN		Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
			վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	(229 275,0)	-	(229 275,0)

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
8010	**ԸՆԴԱՄԵՆԸ՝**		**229 275,0**	**-**	**229 275,0**
	այդ թվում՝				
8100	**Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**		229 275,0	-	229 275,0
	այդ թվում՝				
8160	***2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ***		229 275,0	-	229 275,0
	այդ թվում՝				
8161	**2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն**		229 275,0	-	229 275,0
	որից՝				
8163	*- իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր*	9213	229 275,0	-	229 275,0

Հավելված N 6
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հղված NN	Ընդամենը	այդ թվում՝	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**3 910 932,5**	**3 681 657,5**	**3 855 861,5**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		3 855 861,5	-	3 855 861,5
				այդ թվում՝				
				5. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում		***(373 413,5)***	**-**	***(373 413,5)***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(373 413,5)	-	(373 413,5)
				8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում		***4 229 275,0***	**-**	***4 229 275,0***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	229 275,0	-	229 275,0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	4 000 000,0	-	4 000 000,0
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**55 071,0**	**3 681 657,5**	**-**
				այդ թվում՝				
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**55 071,0**	**3 681 657,5**	**-**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		55 071,0	3 681 657,5	-
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	55 071,0	55 071,0	-
				-Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	x	-	3 626 586,5	-

Հավելված N 7
Երևան քաղաքի ավագանու
2014 թվականի_____-ի
N _____ - Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 97-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	*այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)*	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**3 910 932,5**	**3 681 657,5**	**3 855 861,5**
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**3 855 861,5**	**-**	**3 855 861,5**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		3 855 861,5	-	3 855 861,5
				այդ թվում՝				
				5. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում		***(373 413,5)***	**-**	***(373 413,5)***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(373 413,5)	-	(373 413,5)
				8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում		***4 229 275,0***	**-**	***4 229 275,0***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	229 275,0	-	229 275,0
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	4 000 000,0	-	4 000 000,0
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**55 071,0**	**3 681 657,5**	**-**
				այդ թվում՝				
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**55 071,0**	**3 681 657,5**	**-**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		55 071,0	3 681 657,5	-
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	55 071,0	55 071,0	-
				-Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	x	-	3 626 586,5	-